

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՍ ԱՍԱՏՐՅԱՆ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ  
ԱՌԱՋԻՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ»

Ռուսական առաջին ռևոլյուցիան արմատական բեկում մտցրեց ողու և ռուսական ինքնակալության ներքո գտնվող ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդի տնտեսական-քաղաքական կյանքում:

Ռևոլյուցիայի ուժով կյանքի կոչված արմատական բեկումն իր արտահայտությունը գտավ նաև գրականության բնագավառում: Գրականությունը ռևոլյուցիայի տարիներին ապրեց աննախընթաց վերելք:

«Եռամյա ռևոլյուցիոն փոթորկոտ ժամանակաշրջանին» (լենին), հայ գրականության բեկման ժամանակաշրջանին է նվիրել իր նոր աշխատությունը<sup>1</sup> գրականագետ Աս. Ասատրյանը:

Աշխատության ներածական մասում գրքի հեղինակը համառոտակի անդրադառնում է ռուսական ռևոլյուցիայի համաշխարհային պատմական նշանակությանը, նշելով որ այն իր ծավալով և առաջ քաշած քաղաքական խնդիրների բովանդակությամբ աշխարհում առաջին մեծ ռևոլյուցիան էր:

Համառոտակի շարադրելով ռևոլյուցիայի հիմնական առանձնահատկությունները, հեղինակը հանդում է այն մտքին, թե ռևոլյուցիան համահնչուն էր ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդի ապագային ու սոցիալական ազատագրական պայքարին և որ հայ ժողովրդի ազատագրական պայքարը «ռևոլյուցիայի հերոսական պատմության կարևոր էջերից է» (էջ 5):

Գրախոսվող աշխատության արժանիքներից մեկն այն է, որ հեղինակը գրական երևույթները քննության է առնում ռևոլյուցիոն պայքարի ու հասարակական կյանքի ֆոնի վրա և ընդգծում ղեկավարվածի ու կյանքի, գրականության ու քաղաքական պայքարի սերտ կապը: Վերոհիշյալ աշխատությունը չի սահմանափակվում սոսկ գրական երևույթների շրջանակներով, այլև դառնում է հայ ժողովրդի ռևոլյուցիոն հերոսական պայքարի պատմության մի յուրահատուկ աղբյուր:

Հեղինակը իրավացի կերպով նշելով, որ հայ գրականության ու կուլտուրայի «առաջավոր օջախը կոմկասյան-ռուսաստանյան օջախն էր», հատուկ ուշադրություն է դարձնում նաև Անդրկովկասից ու Ռուսաստանից դուրս հայ կուլտուրական մյուս օջախների գործունեությանը ռևոլյուցիայի տարիներին: Բնական է, որ հայ բազմաթիվ պարբերականներ գեպի ռևոլյուցիան նույնանման վերաբերմունք չէին կարող ունենալ: Չբացառելով այս հանգամանքը, հեղինակը իրեն նպատակ է դրել առավելապես վեր հանել ռևոլյուցիայի գրական արձագանքները մեր գրականության ու ժողովրդային մեջ: Անդրադառնալով հայ գրականության մինչռևոլյուցիոն շրջանին, հեղինակը գրում է, որ մեր գրականությունը Արևմտյանից մինչև Իսահակյանն ու Տերյանը «հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության ուղիների որոնման, արտաքին և ներքին ճնշումից ու շահագործումից ազատագրվելու նպատակին ուղղված գրականություն է» (էջ 12), ընդհանրացնելով, որ հայ ժողովուրդը ռևոլյուցիոն գրոհներին հողեպես ևս նախապատրաստված էր, և որ հայ պրոգրեսիվ գրականության տրամաբանական ընթացքը գալիս էր դեպի ռևոլյուցիան:

Գրքի առաջին գլխում հայ գրականության զարգացման, նրա գաղափարական հզորացման տեսակետից ռևոլյուցիայի ստեղծարար նշանակության կարևոր արտահայտությունը հեղինակը ճիշտ կերպով տեսնում է պրոլետարական գրականության և մարքսիստական բնագավառի ձևավորման փաստի մեջ:

<sup>1</sup> Աս. Ասատրյան, Հայ գրականությունը և ռուսական առաջին ռևոլյուցիան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1956, էջ 299:

Հայ իրականութեան մեջ տեղի ունեցող հասարակական երևույթները զրքում ուսումնասիրված են սուսական իրականութեան հետ շաղկապված:

Ռեուլյուցիոն իրադարձութիւններ լայն ֆոնի վրա հեղինակը քննութեան է առնում հայ պրոլետարական դրականութեան ձևավորման պրոցեսը, ինչպէս հայ մարքսիստական մամուլի էջերում, այնպէս էլ առանձին զրոգների ստեղծագործութիւններում: Հեղինակը իրավացիորեն հայ պրոլետարական դրականութեան ձևավորումը կապում է Հ. Հակոբյանի անվան հետ, վերլուծելով նրա հիմնական ստեղծագործութիւնները: Այնուհետև անդրադառնալով Մ. Պետրոսյանի, Արագու, Ան. Վարդանյանի, Շ. Կուրղինյանի, Մ. Զուրարյանի ստեղծագործութիւններին, հեղինակը ցույց է տալիս այն նորը, որ բերում էին պրոլետարական զրոգները հայ դրականութեան մեջ:

Գրքի հաջորդ մասերում Ասատրյանը հայ ղեմակրատական դրականութեան լավագույն նմուշները քննութեան է առնում ռեուլյուցիայի առաջ քաշած խնդիրների տեսանկյունից, ներառյալ նաև աշուղական և գյուղագիրների գործերը: Հեղինակը բերում է հըսկայական փաստական մատերիալ, ինչպէս նաև արխիվային նյութեր՝ զրված աշխարհի բոլոր անկյուններում և համութեամբ ու բարեխղճութեամբ վերլուծում գրանք: Գրքի բաղմամբ էջերում կարելի է հանդիպել շատ գործերի, որոնք բացահայտված են զիտական խորութեամբ: Կարելի է հիշատակել Վ. Փափաղյանի «Անտասները շարժվում են», Ա. Արփիարյանի «Ոսկե ապարանջանը», Շիրվանդաղեի «Ջհուղի ականջը», Շ. Կուրղինյանի «Հետտար քո խաչը», Բսահակյանի, Տերյանի և այլ հեղինակների շատ գործեր: Ասատրյանը արխիվային նյութերի հիման վրա (ղերագրանցապէս նամակներ) լուսարանել է հայ անվանի զրոգներ Նար-Գոսի, Ս. Շահագիրի և ուրիշների՝ զեպի ռեուլյուցիան ունեցած վերաբերմունքը, որը թարմութեւն է հաղորդում զրքին:

Մեր դրականութեւնը ղեկւոս բոտ արժանվոյն չի բացահայտել հայ մեծանուն զրոգ Եր. Օտյանի ստեղծագործութիւնները: Հեղինակը անաչառ և հատուկ խնամքով է մատուցել ընթերցողին զրոգի ստեղծագործութիւնները, մասնավորապէս հրապարակախոսական հոգվածները: Հեղինակը հատուկ ուսումնասիրութեան նյութ է դարձրել Շիրվանդաղեի, Թումանյանի, Փափաղյանի, Եր. Արագույանի և ուրիշների հրապարակախոսական ու քննադատական հոգվածները, որոնք խիստ արժեքավոր և ուսանելի են: Գրքի հաջորդ էջերում հեղինակը, նշելով ռեուլյուցիայի տարիներին ցարիզմի կողմից հրահրվող նացիոնալիստական տրամագրութիւնների բորբոքումը և ազգամիջյան կոտորածները, հանգամանորեն անդրադառնում է մեր ղեմակրատ զրոգների հասարակական գործունեութեանը ազգերի համերաշխութեան գործում, մասնավորապէս Թումանյանի գործունեութեանը, աչքաթող չանելով եղբայրական վրաց և աղբրեջանական դրականութիւնների նշանավոր ղեմերն ու ղեպերը, ցույց տալիս ժողովուրդների համերաշխութեան առողջ բնագոյ:

Իր աշխատութեան մեջ Ասատրյանը անդրադառնում է ռեուլյուցիայի տարիներին հրապարակվող երգիծական-սատիրական «Ջոսնա», «Հայելի», «Յաթարալա» և այլ պարբերականների գործունեութեանը, առատ ու թարմ նյութ տրամադրելով ընթերցողին:

Ուշագրութեամբ է ընթերցվում գրքի Ծրդ զլուխը, ուր հեղինակը վեր է հանում սուս դրականութեան բարերար ներգործութիւնը, մասնավորապէս Գորկու ներգործութիւնը: հայ դրական մտքի վրա, մյուս կողմից հայ առաջագեմ զրոգների ու թերթերի՝ ղեպի Գորկին և ուս դրականութեւնն ունեցած ջերմ վերաբերմունքը:

Հեղինակը հաղորդում է մեր դրականագիտութեան կողմից ղեկւոս չընշափված տեղեկութիւններ, որոնք լուրջ հետաքրքրութեւն կարող են առաջացնել ոչ միայն հայ, այլև ուս ընթերցողների լայն շրջանում: Այդ տեղեկութիւնները կապված են 1906 թ. Գորկու՝ Ամերիկա կատարած ուղևորութեան հետ:

Գորկու ուղևորութեւնը ջերմ ընդունելութեւն է գտել ամերիկահայ առաջագեմ մտքի կողմից: Հեղինակը «Արաքս» և «Երիտասարդ Հայաստան» պարբերականներից բերում է հետաքրքրական տեղեկութիւններ և որ ամենակարեւորն է՝ Գորկու «Բանախոսութեւնը» կարգացված Բոստոնում, որը ղեկւոս հեղինակի ոչ մի հատորում չի գետեղված:

Հեղինակի աչքից չի վրիպել նաև հայ թարգմանական դրականութեան (ղերագրանցապէս ուս զրոգներից) աննախընթաց վերելքը ռեուլյուցիայի օրերին:

Գրքի եղբայրակիչ զլխում Ասատրյանը կանգ է առնում Արեմուտքի զրոգերնիվ զրոգների՝ ղեպի սուսական ռեուլյուցիան ունեցած վերաբերմունքի արձագանքներին հայ պարբերական մամուլի էջերում, որոնցից առավել նշանակալի են Անատուլ Թրանսի ճառը՝

տպված «կայծի» № 21-ում և Մարկ Տվենի «Ուրի մենախոսությունը», «Երիտասարդ Հայաստանի» 1903 թ. փետրվարի 28-ի համարում:

Ասատրյանի գրքում կան և թերություններ:

Կուրդիստանի ստեղծագործության առաջին շրջանի բնութագրումը մեզ թվում է վիճելի: Զարմանք է պատճառում բանաստեղծուհու լավագույն գործերի մոռացության տալու փաստը, գործեր, որոնք կարող էին օգնել հեղինակի նպատակադրմանը: Ռեոլյուցիան դյուղացիական զանգվածների ազատագրման հարցը, բանվորադյուղացիական զաշինքի լենինյան գաղափարը առաջին պլանի վրա դրեց: Հետևապես չէր կարելի մոռացության տալ Կուրդիստանի «Մեր ցավը մեկ է» բանաստեղծությունը, որը գաղափարական հստակությամբ և զանգվածների գործ է մեր գրականության մեջ:

Պրոլետարական գրականության ուսումնասիրությունը գրքում համեմատաբար քիչ տեղ է զբաղում, և այդ պատճառով զգացվում է փոքր ինչ անհամաչափություն: Ամփոփման մեջ այդ անհամաչափությունը չի զգացվում (ամփոփումը գրված է ուսերեն և այդ պահանջը պետք է ներկայացնել զիտական մյուս աշխատություններին ևս):

Կոմպոզիցիոն իմաստով ցանկալի կլիներ, որ հեղինակը նախ քննության առնելը զեմոկրատ գրողների ստեղծագործությունները, իսկ վերջում պրոլետարականը: Սա կօգներ հեղինակի նպատակադրմանը և ավելի կընդգծեր սոցիալական տարիներին ընդհանուր գրականության գաղափարական բովանդակության զարգացման էվոլյուցիան:

Կարիք կար թերևս կանգ առնել հայ մարքսիստական գրականագիտական մտքի ձևավորման վրա: Հեղինակը, բավարարվել է միայն Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի անունները հիշելով, առանց խոսելու նրանց էսթետիկական հայացքների մասին:

Աս. Ասատրյանի «Հայ գրականությունը և սոցիալական առաջին ռեոլյուցիան» աշխատությունը մեծ չէ ծավալով, բայց հարուստ է բովանդակությամբ, նյութի ընդգրկման շրջանակներով:

Մատուցելով ընթերցողին սոցիոլոգիոն տարիների մեր գրականության ամրոգչ հարստությունը, հեղինակը կատարել է պատվավոր և գովասանքի արժանի աշխատանք:

Գ. ԱՐԱՋՅԱՆ

## А. Восканян „О роли географической среды в развитии общества“

Под редакцией профессора М. П. Баскина, в издании Академии наук Армянской ССР, в начале 1956 г. вышла книга А. М. Восканяна «О роли географической среды в развитии общества».

Книга А. М. Восканяна посвящена одному из важнейших и актуальных вопросов социологии.

Автор поставил перед собой две основные задачи: 1) подвергнуть критике, исходя из известных положений марксистско-ленинской философии, антинаучные и реакционные учения о роли географической среды в общественном развитии и 2) показать на примере СССР возросшую роль и значение географической среды в развитии общества при социализме, открывающие неисчерпаемые возможности целеустремленного использования географической среды в интересах самого общества, в интересах непосредственных производителей материальных благ.

Работа А. М. Восканяна состоит из 4 глав.

В первой главе («Идеалистическая и реакционная сущность географического направления в буржуазной социологии») подвергаются критике социологические учения, в которых делается попытка весь ход исторического развития человеческого общества объяснить характером и особенностями условий окружающей природы.

Отмечая научную несостоятельность всех попыток объяснить общественное развитие географическими факторами и вскрывая идеалистическую сущность всех этих попыток, автор вместе с тем прослеживает эволюцию географического направления в социологии.

Տեղեկագիր 1-9